«ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ՆԵՐ ԿԱՏԱՐԵԼ

ՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կինեմատոգրաֆիայի մասին» 2021 թվականի հունիսի 30-ի ՀՕ-302-Ն օրենքի
(այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 2-րդ մասի գործողությունը դադարեցնել։
Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում՝
1) 1-ին և 2-րդ կետերի գործողությունը դադարեցնել.
2) 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«4) դրամագլուխ՝ անձեռնմխելի կապիտալ, որը ձևավորվում և համալրվում է պետական բյուջեից
կատարվող հատկացումների և Օրենքով սահմանված այլ աղբյուրներից իրականացվող վճարների հիման
վրա։»
3) 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«8) կինեմատոգրաֆիա՝ մշակույթի և արվեստի ոլորտ, որը ներառում է մասնագիտական,
ստեղծագործական, արտադրական, տեխնիկական, գիտական և կրթական գործունեության համակցություն՝
ուղղված ֆիլմի ստեղծմանն ու օգտագործմանը»:
4) 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«9) կինոթատրոն՝ ֆիլմի ցուցադրման համար նախատեսված վայր, որը հագեցված է էկրանով և
տեխնիկական միջոցներով»։
5) 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«10) կինոժառանգություն՝ ֆիլմեր, որոնց նկատմամբ Հայաստանի Հանրապետությունը ունի ոչ
գույքային և գույքային իրավունքներ, ինչպես նաև այնպիսի ֆիլմեր, որոնց հիմնանյութը փոխանցվել է
Հայաստանի Հանրապետության պահպանությանը»։
6) 11-րդ կետում հանել «ազգային» բառը.
7) 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13) կինոփառատոն՝ մշակութային միջոցառում, որը հանդիսանում է նպատակային ընտրված
ֆիլմերի ցուցադրություն, տեղի է ունենում դրա կազմակերպիչների կողմից հաստատված կանոնակարգին
համապատասխան և կարող է իր մեջ ներառել մեկ և ավելի

անվանակարգերում ֆիլմերի մրցութային
ծրագիր»:
8) 15-րդ կետի գործողությունը դադարեցնել.
9) 21-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«21) ստեղծագործական խումբ՝ ֆիլմի ստեղծմանը մասնակցող աշխատախումբ, այդ թվում՝
բեմադրող ռեժիսոր, սցենարի հեղինակ, հատկապես տվյալ ստեղծագործության համար ստեղծված
երաժշտական ստեղծագործության հեղինակ, երկխոսության հեղինակ, բեմադրող օպերատոր»:
10) 22-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
11) «վարձութային վկայական՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ֆիլմի տարածման
և ցուցադրման համար պարտադիր հանդիսացող ազգային մարմնի կողմից տրամադրվող թույլտվություն»:
12) 23-րդ կետի գործողությունը դադարեցնել.
13) 23.1 կետը «ապրանքների և ծառայությունների» բառերը փոխարինել «ապրանքների,
ծառայությունների և աշխատանքների» բառերով
14) 24-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«24) ֆիլմ՝ տեսալսողական ստեղծագործություն, որը ստեղծվել է գեղարվեստական,
վավերագրական, գիտահանրամատչելի, կրթական, անիմացիոն, հեռուստատեսային կամ այլ ձևով
ստեղծագործական հայեցակարգի հիման վրա, որը բաղկացած է կինոժապավենի կամ այլ կրիչների վրա
ձայնագրված պատկերներից և միացված հաջորդաբար փոխկապակցված շրջանակների թեմատիկ
ամբողջության մեջ և նախատեսված է համապատասխան տեխնիկական սարքերի օգնությամբ ընկալելու
համար: »:
15) 26-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«26) ֆիլմ տարածող (դիստրիբյուտոր)՝ իրավաբանական անձ կամ ֆիզիկական անձ, որը իրավունք
ունի ֆիլմ տարածելու ինչպես նաև իրականացնում կամ կազմակերպում է դրա տարածումը:»:
16) 27-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«27) ֆիլմ ցուցադրող՝ ֆիլմի ցուցադրումը կազմակերպող կամ իրականացնող իրավաբանական
անձ:»:
17) 28-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«28) ֆիլմարտադրող՝ ստեղծագործական խմբի հետ կնքված պայմանագրերի հիման վրա ֆիլմի
նկատմամբ բացառիկ գույքային և ոչ գույքային իրավունքներ ունեցող իրավաբանական անձ, որը
նախաձեռնել և պատասխանատվություն է ստանձել ֆիլմի ֆինանսավորման, արտադրության և տարածման
համար:»:
18) 31-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«31) ֆիլմի հիմնանյութ՝ նեգատիվը, հակատիպը, ֆիլմի հսկիչ պատճենը, վերաձայնագրման
բնօրինակ մագնիսական հնչյունագրերը, երաժշտությունը, աղմուկը, ձայնասկավառակը և ցանկացած
նյութական ձևով ֆիլմը վերարտադրելու համար անհրաժեշտ այլ նյութեր։»։
19) 35-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«35) ֆիլմի ցուցադրում՝ ֆիլմի հրապարակային ցուցադրում կինոթատրոնում, կամ հեռարձակում
եթերով, կաբելային, արբանյակային հեռուստատեսությամբ և այլ տեխնիկական միջոցներով։»
20) Լրացնել 36-րդ կետը հետևյալ բովանդակությամբ.
«36) պետական ֆինանսավորում՝ պետական բյուջեի միջոցների հաշվին կինեմատոգրաֆիայի
ոլորտին տրամադրվող ֆինանսավորում։»։
Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում հանել «և շահերի բախման
կառավարելիությունը» բառերը.
Հոդված 4. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի գործողությունը դադարեցնել.
Հոդված 5. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
«10) հաստատում է պետական ֆինանսավորում տրամադրելու մասնաբաժինները և
սահմանաչափերը, այդ նպատակով անցկացվող մրցույթների կազմակերպման և անցկացման կարգը։»։
Հոդված 6. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«1) հանդիսանում է կինեմատոգրաֆիայի ոլորտի հեղինակների գույքային իրավունքները
կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպություն։»։
Հոդված 7. Օրենքի 10-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

« 1. Ազգային մարմինը Հայաստանի Հանրապետության հիմնադրած մշակութային հիմնադրամ է,
որն ունի Օրենքով սահմանված բացառիկ լիազորություններ:
2. Ազգային մարմինը իր կողմից կամ իր միջոցով ֆինանսավորված ֆիլմերի նկատմամբ ձեռք է
բերում գույքային իրավունքներ, ինչպես նաև կարող է իրականացնել ֆիլմարտադրության հետ կապված
ձեռնարկատիրական գործունեություն ինքնուրույն կամ այլ տնտեսվարող սուբյեկտի միջոցով, որում ունի
բաժնեմասնակցություն կամ հնարավորություն՝ կանխորոշելու վերջինիս կառավարման մարմինների
որոշումները կամ էապես ազդելու նրանց որոշումների կայացման վրա։»։
Հոդված 8. Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում «ղեկավարը՝ ի
պաշտոնե» բառերը փոխարինել «ներկայացուցիչը» բառով
Հոդված 9. Օրենքի 13-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
«1. Ազգային ֆիլմ է համարվում այն ֆիլմը, որը միաժամանակ բավարարում է հետևյալ բոլոր

պայմաններին.
1) ֆիլմի ստեղծագործական խմբի կեսից ավելին Հայաստանի Հանրապետության քաղաքացի է.
2) ֆիլմարտադրությանը մասնակցում է Հայաստանի Հանրապետությունում ռեզիդենտ
կազմակերպություն։
3) ֆիլմի բնօրինակը հայերեն է, կամ Հայաստանի Հանրապետությունում բնակվող ազգային
փոքրամասնություններից որևէ մեկի լեզվով, բացառությամբ այն դեպքերի, երբ օտար լեզվի օգտագործումը
ֆիլմում հանդիսանում է ստեղծագործական գաղափարի անբաժանելի մաս.
2. Ազգային ֆիլմեր են համարվում նաև այն ֆիլմերը, որոնց գույքային իրավունքները փոխանցվել
են Հայաստանի Հանրապետությանը կամ ազգային մարմնին։
3. Ազգային ֆիլմի կարգավիճակ տրվում է Լիազոր մարմնի որոշմամբ՝ Կառավարության կողմից
սահմանված կարգով։»
Հոդված 10. Օրենքի 14-րդ հոդվածում՝
1) 1-ին մասից հանել «Ազգային» բառը.
2) 2-րդ մասում «կինոժառանգության հանրային օգտագործումը կազմակերպելու նպատակով
ազգային ֆիլմի փաստաթղթերը » բառերը փոխարինել «կինոժառանգության օգտագործումը
կազմակերպելու նպատակով ֆիլմի փաստաթղթերը» բառերով.

3) 3-րդ մասի գործողությունը դադարեցնել։
Հոդված 11. Օրենքի 16-րդ հոդվածի 3-ին մասի 3-րդ կետի գործողությունը դադարեցնել։
Հոդված 12. Օրենքի 21-րդ հոդվածի գործողությունը դադարեցնել։
Հոդված 13. Օրենքի 22-րդ հոդվածում՝
1) վերնագրում «Պետական բյուջեի հաշվին ֆինանսավորումը» բառերը փոխարինել
«Պետական ֆինանսավորում» բառերով։
2) 1-ին մասում «Պետական բյուջեի հաշվին կինեմատոգրաֆիայի ոլորտի ֆինանսավորումն
իրականացվում է» բառերը փոխարինել «Պետական ֆինանսավորումն իրականացվում է» բառերով.
3) 3-րդ մասում «Կառավարության» բառը փոխարինել «Լիազորված պետական մարմնի»
բառերով.
4) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
«4) Յուրաքանչյուր տարվա համար հատկացված պետական ֆինանսավորումը ամբողջությամբ
չօգտագործելը հիմք չէ հաջորդ տարվա համար պետական ֆինանսավորման միջոցներ չնախատեսելու կամ
պակաս նախատեսելու համար։»։
5) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
«5) պետական ֆինանսավորման տվյալ տարում հատկացված և չօգտագործված միջոցները մինչև
հաջորդ տարվա առաջին եռամսյակի ավարտը փոխանցվում են

դրամագլխին։»։
6) 6-րդ մասի գործողությունը դադարեցնել։
Հոդված 14. Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասում «շահառուներին տրամադրվում են ազգային
ֆիլմերի ստեղծման, տարածման և կինոժառանգության պահպանման նպատակով» բառերը փոխարինել
«օգտագործվում են ազգային մարմնի կանոնադրական նպատակների իրականացման համար» բառերով։
Հոդված 15. Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասում «Կառավարության» բառը փոխարինել
«Լիազորված պետական մարմնի» բառերով։
Հոդված 16. Օրենքի 26-րդ հոդվածում՝
1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1.Համատեղ արտադրություն է համարվում օտարերկրյա և Հայաստանի Հանրապետության
ռեզիդենտ ֆիլմարտադրողների կողմից համատեղ իրականացվող այն ֆիլմարտադրությունը, որը
բավարարում է հետևյալ չափանիշներին.
1) համատեղ արտադրողներից յուրաքանչյուրի մասնակցությունը իրականացվում է
ֆինանսական, ստեղծագործական և տեխնիկական ուղղություններով
2) համատեղ արտադրողներից յուրաքանչյուրի ստեղծագործական, տեխնիկական և
դերասանական անձնակազմին, կատարողներին և տեխնիակական միջոցներին առնչվող մասնակցությունը
համամասնական է նրանց ֆինանսական ներդրմանը.
3) ֆիլմի նկարահանման անձնակազմը բաղկացած է համատեղ
4) ֆիլմի հետարտադրությունը իրականացվել է համատեղ արտադրողների պետություններում
5) առկա է համատեղ արտադրության պայմանագիր, որն ունի եկամուտների բաշխմանը
վերաբերող դրույթներ, սահմանում է յուրաքանչյուր համատեղ արտադրողի գույքային և ոչ գույքային
իրավունքները, ապահովում է նրա համար ֆիլմի նյութերի հասանելիությունը։»։
2) 2-րդ մասի գործողությունը դադարեցնել.
Հոդված 17. Օրենքի 27-րդ հոդվածի գործողությունը դադարեցնել ։
Հոդված 18. Օրենքի 28-րդ հոդվածի 5-րդ մասի գործողությունը դադարեցնել։
Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված է օտարալեզու ֆիլմի հայերեն
կրկնօրինակումը և (կամ) տեսանելի ու հստակ ենթագրումը։

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է 16-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ կատարման
ժամկետը 2030 թվական, հետևաբար օրենքի փոփոխության նախագծում կներառվի նաև 28-րդ հոդվածի 1-
ին մասով սահմանված ժամկետի փոփոխություն։